



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Դ Ա Տ Ա Խ Ա Ձ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փող. 5

№ 1/16-18
«03» 12 2018թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային
Ժողովի նախագահ պարոն Ա.Բաբլոյանին

Միջնորդագիր

**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արամ Խաչիկի Հարությունյանին
ազատությունից զրկելուն համաձայնություն տալու վերաբերյալ**

2015թ. սեպտեմբերի 2-ին Սիլվա Համբարձումյանը ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում հաղորդում է տվել այն մասին, որ 2008թ. ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանին իրեն պատկանող, ինչպես նաև ըստ նախնական համաձայնության՝ հետագայում իրեն փոխանցվելիք կազմակերպություններին գումարավոր մետաղների 10 հանքավայրերում իր լիազորությունների շրջանակում «Ընդերքի օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիաներ» տրամադրելու համար որպես կաշառք պահանջել և ստացել է 14 մլն ԱՄՆ դոլար գումար: Նշված գումարից 8 մլն ԱՄՆ դոլարն Արամ Հարությունյանի ցուցումով 2008թ. փետրվարի 6-ին փոխանցվել է վերջինիս ծանոթ Արաքս Դիլանյանի հաշվին, իսկ մնացած 6 մլն ԱՄՆ դոլարը 2008թ. ընթացքում մաս-մաս, կանխիկ տվել է Արամ Հարությունյանի օգնականին:

Առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու դեպքի առթիվ 2015թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 62224715 քրեական գործը:

2017թ. փետրվարի 7-ին, նկատի ունենալով, որ գործով ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ, որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:

Հետագայում ի հայտ են եկել քննության ընթացքում անհայտ, էական նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնց հիման վրա 2017թ. նոյեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության ավագ դատախազը որոշում է կայացրել նոր երևան եկած հանգամանքների հետևանքով վարույթ հարուցելու մասին և նույն օրը որոշումը, իրավական օգնության հարցման պատասխանն ու կից փաստաղթերի հայերեն թարգմանություններն ուղարկել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ քննություն կատարելու համար:

2018թ. հունիսի 7-ին ՀՀ գլխավոր դատախազը որոշում է կայացրել թիվ 62224715 քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2017թ. փետրվարի 7-ի որոշումը վերացնելու մասին և որոշումն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ նախաքննություն կատարելու համար:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ 2007թ. աշնանը Սիլվա Համբարձումյանը գունավոր մետաղների հանքարդյունաբերական գործունեությամբ զբաղվելու նպատակով այցելել է բնապահպանության նախարարության երկրաբանական վարչություն՝ տեղեկանալու այդ գործունեությամբ զբաղվելու ընթացակարգերին: Այդ նպատակով այցելել է ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքի վարչություն, որտեղ պատահական հանդիպել է իր ծանոթին, հետաքրքրվել ոլորտով և տեղեկացել, որ հանք շահագործելու համար անհրաժեշտ է ձեռք բերել հանքերևակումների ուսումնասիրության հատուկ լիցենզիաներ և կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ, իսկ այդ լիցենզիաները տրամադրվում են աճուրդային կարգով, որը կազմակերպում է ՀՀ բնապահպանության նախարարի ղեկավարած միջգերատեսչական հանձնաժողովը: Վերջինիս միջոցով ծանոթացել է բնապահպանության նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի փոխտնօրենի հետ, ով եղել է ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի մտերիմը, ում միջոցով էլ Երևան քաղաքի Տիգրան Մեծի 4 հասցեում գտնվող «Հայարդնախագիծ ինստիտուտ» ԲԲԸ-ի շենքում հանդիպել է Արամ Հարությունյանին և հայտնել հանքարդյունաբերությամբ զբաղվելու իր մտադրության մասին: Զրուցելու ընթացքում Ա.Հարությունյանն ակնարկել է, որ ուսումնասիրության լիցենզիաներ ձեռք բերելու համար աճուրդի գումարից բացի, այլ գումարներ են անհրաժեշտ կոնկրետ իր պահանջած հանքերևակումներն աճուրդի դնելու գործընթացը կազմակերպելու համար և հասկացրել է, որ դրա համար պետք է կաշառք տա: Խորհրդակցելով ծանոթ երկրաբանների հետ՝ որոշել է ձեռք բերել ընդհանուր 10 հանքավայրերի ուսումնասիրության լիցենզիաներ, որի մասին հայտնել է Ա.Հարությունյանին: Քննարկումների արդյունքում պայմանավորվել են ձեռք բերել Սյունիքի մարզի Խուստուփ-Ծավի և Բերդիքարի պղինձ-մոլիբդենային հանքերևակումների, Գեղարքունիքի մարզի Զիլի քրոմիտների, Կոտայքի մարզի

Արզականի տիտանի, Սյունիքի մարզի Մերձարաքսյանի, Գյոզ-Գյոզի և Փխրուտի ոսկու, Գեղարքունիքի մարզի Թթուջուր-Ճամբարակի և Տիգրանաբերդի պղնձի, Լոռու մարզի Բարդուտի ոսկու հանքերնակումների ուսումնասիրության հատուկ լիցենզիաները: Նշված 10 հանքերնակումների ուսումնասիրության հատուկ լիցենզիաներ տրամադրելու համար Ա.Հարությունյանը պահանջել է 4.2 մլրդ ՀՀ դրամին համարժեք 14 միլիոն ԱՄՆ դոլար կաշառք: Ա.Հարությունյանը հայտնել է, որ լիցենզիաները տրամադրվելու են 5 տարի ժամկետով, սակայն հետագայում դրանց ժամկետը երկու անգամ կերկարացնի երկու տարով՝ այդ կերպ հնարավորություն ընձեռելով հանքերում կատարել անհրաժեշտ ֆինանսական ներդրումներ: Սիլվա Համբարձումյանը համաձայնել է նշված գումարի չափին և պատրաստակամություն հայտնել լիցենզիաները ձեռք բերելուն զուգահեռ բանկում ունեցած իր հաշիվներից գումարներ պարբերաբար կանխիկացնել և Ա.Հարությունյանի օգնականի միջոցով ուղարկել նրան:

Այնուհետև Սիլվա Համբարձումյանը և Արամ Հարությունյանի հանձնարարությամբ վերջինիս օգնականը ձեռնամուխ են եղել Արամ Հարությունյանի մատնանշած «Լուվիար» ընկերությունը գնելու, դրանով Արամ Հարությունյանի ղեկավարած մրցույթային հանձնաժողովի կազմակերպած աճուրդներին մասնակցելու, ինչպես նաև լիցենզիա ձեռք բերած կազմակերպությունները Սիլվա Համբարձումյանին փոխանցելու գործընթացի կազմակերպմանը, ինչի արդյունքում 2008թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ Սյունիքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում տեղակայված տարբեր բնակավայրերում գտնվող թվով 10 հանքերնակումների ուսումնասիրության թվով 10 հատուկ լիցենզիաներն անցել են Սիլվա Համբարձումյանի ղեկավարած ընկերությունների տրամադրության տակ: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2008թ. հունվար ամսից մինչև նույն տարվա նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում Սիլվա Համբարձումյանը «ՎՏԲ-Հայաստան» բանկում իր անվամբ բացված հաշվեհամարից կանխիկացրել և Արամ Հարությունյանի օգնականի միջոցով նրան է փոխանցել 6 մլն ԱՄՆ դոլար կաշառքի գումարը: Գումարի առաջին մասը՝ 600.000 ԱՄՆ դոլարը, 2008թ. հունվարի 29-ին՝ «ՎՏԲ Հայաստան» բանկի գլխամասային գրասենյակում իր հաշվեհամարից կանխիկացրել և օգնականի միջոցով տվել է Ա.Հարությունյանին: Հաջորդ օրը տեղի է ունեցել Արզականի տիտանի հանքավայրի ուսումնասիրության լիցենզիայի համար անցկացվող աճուրդը, որտեղ հաղթող է ճանաչվել իր „Լուվիար,, ՍՊԸ-ն: Ապա պայմանավորվածության համաձայն՝ Սիլվա Համբարձումյանը շարունակել է մասնակցել աճուրդներին, որոնց հետ զուգահեռ Ա.Հարությունյանի օգնականի հետ այցելել են բանկ, որտեղ մարտ և ապրիլ ամիսներին երկու անգամ կանխիկացրել է 2.000.000-ական, մեկ անգամ 1.000.000 ԱՄՆ դոլար և փոխանցել նրան: Այդ ընթացքում Սիլվա Համբարձումյանին պատկանող «Լուվիար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հաղթող է ճանաչվել աճուրդներում և ձեռք բերել նախատեսված

լիցենզիաները: Կաշառքի կանխիկ գումարի վերջին մասը՝ 400.000 ԱՄՆ դոլարը, Ա.Հարությունյանին ուղարկել է 2008թ. սեպտեմբերի վերջին, որից հետո ձեռք է բերել «Հանքաբուրգ» ՍՊ ընկերությունը՝ Գյոզ-Գյոզի ոսկու հանքավայրի լիցենզիայով:

Պահանջված կաշառքի գումարի մյուս մասը՝ 8 մլն ԱՄՆ դոլարը, Սիլվա Համբարձումյանը Արամ Հարությունյանին տվել է բանկային փոխանցման եղանակով: Մասնավորապես՝ 2008թ. փետրվար ամսին Սիլվա Համբարձումյանն իրեն պատկանող «ԹԻ ԷՍ ԷՍ ՍԻ Արմենիա» ընկերության 100% բաժնետոմսերը 40 մլն. ԱՄՆ դոլարով վաճառել է Արաբական Միացյալ Էմիրություններում գործունեություն իրականացնող արաբական «ՌԱԿ Միներալզ ընդ Մեթալզ Ինվեսթմենթս ՖԶ» ընկերությանը: «ԹԻ ԷՍ ԷՍ ՍԻ Արմենիա» ընկերության բաժնետոմսերի վաճառքի պայմանագրով սահմանված դրույթի ուժով 2008թ. փետրվարի 7-ին արաբական ընկերությունը Ֆուջեյրայի ազգային բանկի միջոցով ներքին փոխանցման եղանակով Արամ Հարությունյանի առաջարկով 8 մլն. ԱՄՆ դոլար գումարը փոխանցել է պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալուն օժանդակելու պատրաստակամություն հայտնաձևելու նպատակով իր բանկային հաշվեհամարները տրամադրած, Արաբական Միացյալ Էմիրություններում մշտական բնակություն հաստատած՝ Արաքս Դիլանյանի՝ «Աբու Դաբի քաղաքի Նեշնլ բանկում» բացված թիվ 0170202864 հաշվեհամարին: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ նույն օրը Արաքս Դիլանյանը ստացված 8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք 29.296.000 ԱՄԷ դիրհամը ներքին փոխանցումով փոխանցել է Արամ Հարությունյանի մտերիներ, կաշառք ստանալու հարցում նրան օժանդակող՝ Գագիկ Կարապետյանի, Վիկտոր Մարտիրոսյանի և Արմեն Խաչատրյանի անուններով բացված հաշվեհամարներին, ովքեր հանդիսացել են Արամ Հարությունյանի մտերիմները:

Նշվածներից Արմեն Խաչատրյանը, ով այդ ժամանակ հանդիսացել է փաստացի Արամ Հարությունյանին պատկանող «Ընդերքաբեր» ՍՊԸ և «Նաիրի ճանապարհաշինարարական-շահագործման» ԲԲ ընկերության տնօրենը, 2008թ. փետրվարի 5-ին Արամ Հարությունյանի հանձնարարությամբ մեկնել է ԱՄԷ և Աբու Դաբիի «Նացիոնալ բանկում» իր անվամբ հաշվեհամար է բացել, որի փաստաթղթերը, 2 օր անց վերադառնալով ՀՀ, հանձնել է Արամ Հարությունյանին: 2009թ. կրկին մեկնել է ք.Դուբայ, բանկում Արամ Հարությունյանի հանձնարարությամբ կանխիկացրել շուրջ 250000 ԱՄՆ դոլար, որով գնել է մի քանի միավոր շինարարական տեխնիկա, բերել ՀՀ և ձևակերպել իր ղեկավարած, վերը նշված կազմակերպությունների անվամբ: Բացի նշված գումարից, Արամ Հարությունյանի հանձնարարությամբ կանխիկացրել է ևս 200000 ԱՄՆ դոլար և հանձնել իրեն անձանոթ մի անձնավորության: Դրանից հետո՝ 2010թ. հունվարին, ք.Դուբայում Արամ Հարությունյանի հետ այցելել է բանկ, վերջինիս հանձնարարությամբ ստորագրել է որոշ փաստաթղթեր և իր անվամբ գրանված հաշվեհամարի վրա եղած գումարը փոխանցել է նրան և փակել հաշվեհամարը:

2017թ. հունվարի 31-ին Արաքս Դիլանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նա օժանդակել է պաշտոնատար անձի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալուն:

2018թ. նոյեմբերի 20-ին Արմեն Խաչիկի Խաչատրյանին և Վիկտոր Արշավիրի Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով այն բանի համար, որ նրանք օժանդակել են պաշտոնատար անձի կողմից առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալուն:

2018թ. նոյեմբերի 23-ին որոշում է կայացվել Գագիկ Հրանտի Կարապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և հայտարարվել է հետախուզում:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արամ Հարությունյանը Սիլվա Համբարձումյանից պահանջել և միջնորդավորված եղանակով ստացել է առանձնապես խոշոր չափերով կաշառք, այնուհետև՝ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված առաջնապես խոշոր չափերով գույք՝ այն է՝ նշված կաշառքի առարկան տարբեր անձանց անուններով բանկային հաշիվներով փոխանցումներ է ապահովել՝ նպատակ ունենալով թաքցնել այդ գումարի հանցավոր ծագումը, այսինքն՝ առերևույթ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված առանձնապես ծանր հանցագործություններ:

Վերը նկարագրված փաստական հանգամանքները պարզվել են հետևյալ ապացույցներով.

> Սիլվա Համբարձումյանի ցուցմունքներով և առերեսման արձանագրություններով, որ գումավոր մետաղների 10 հանքավայրերում իր լիազորությունների շրջանակում «Ընդերքի օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության հատուկ լիցենզիաներ» տրամադրելու, հետագայում նաև դրանց օգտագործման հետ կապված խոչընդոտները հարթելու համար Արամ Հարությունյանը որպես կաշառք պահանջել և ստացել է 14 մլն ԱՄՆ դոլար,

> Արմեն Խաչատրյանի ցուցմունքով այն մասին, որ քննությանը հետաքրքրող ժամանակահատվածում հանդիսացել է փաստացի Արամ Հարությունյանին պատկանող «Ընդերքաբեր» ՍՊԸ և «Նաիրի ճանապարհաշինարարական-շահագործման» ԲԲ ընկերության տնօրենը, 2008թ. փետրվարի 5-ին Արամ Հարությունյանի հանձնարարությամբ մեկնել է ԱՄԷ և Աբու Դաբիի «Նացիոնալ բանկում» իր անվամբ հաշվեհամար է բացել, որի փաստաթղթերը, 2 օր անց վերադառնալով ՀՀ, հանձնել է Արամ Հարությունյանին: Օդանավակայանում հանդիպել է Վիկտոր Մարտիրոսյանին և

Գագիկ Կարապետյանին: 2009թ. կրկին մեկնել է ք.Դուբայ, բանկում Արամ Հարությունյանի հանձնարարությամբ կանխիկացրել շուրջ 250000 ԱՄՆ դոլար, որով գնել է մի քանի միավոր շինարարական տեխնիկա, բերել ՀՀ և ձևակերպել իր ղեկավարած, վերը նշված կազմակերպությունների անվամբ: Բացի նշված գումարից, Արամ Հարությունյանի հանձնարարությամբ կանխիկացրել է ևս 200000 ԱՄՆ դոլար և հանձնել իրեն անձանոթ մի անձնավորության: Դրանից հետո՝ 2010թ. հունվարին, ք.Դուբայում Արամ Հարությունյանի հետ այցելել է բանկ, վերջինիս հանձնարարությամբ ստորագրել է որոշ փաստաթղթեր, իր անվամբ գրանված հաշվեհամարի վրա եղած գումարը փոխանցել է նրան և փակել հաշվեհամարը:

> ՀՀ բնապահպանության նախարարությունից առգրաված փաստաթղթերի զննության արձանագրություններով, որոնցով հաստատվել են, որ ՀՀ Սյունիքի մարզի Խուստուփ-Ծավի պղինձ-մոլիբդենային հանքերևակման ուսումնասիրության թիվ 63, Սյունիքի մարզի Բերդիքարի պղինձ-մոլիբդենային հանքերևակման ուսումնասիրության թիվ 64, նույն մարզի Մերձարաքսյան ոսկու՝ թիվ 59, Գյոզ-Գյոզ տեղամասի ոսկու՝ թիվ 66 հատուկ, Գեղարքունիքի մարզի Զիլի քրոմիտների՝ թիվ 60, Կոտայքի մարզի Արզականի տիտանի՝ թիվ 61, Գեղարքունիքի մարզի Թթուջուր-Ճամբարակի պղնձի՝ թիվ 68, Գեղարքունիքի մարզի Տիգրանաբերդի պղնձի թիվ 67, Լոռու մարզի Բարդուտի ոսկու թիվ 74 և ՀՀ Սյունիքի մարզի Փխրուտի ոսկու թիվ 75 հատուկ լիցենզիանները 2008թ. ընթացքում տարբեր եղանակներով տրվել են Սիլվա Համբարձումյանին պատկանող ընկերություններին, ընդ որում՝ դրանց մի մասը վերջինս գնել է Արամ Հարությունյանի մտերիմներին՝ Գրիգոր Արշակյանին, Մակար Պետրոսյանին և տնօրեն Կարեն Հովհաննիսյանին պատկանող ընկերություններից:

Ապացույց ճանաչված հետևյալ փաստաթղթերով՝

> **Ս.Համբարձումյանի** կողմից ներկայացված՝ 03.02.2008թ. «ՌԱԿ ՄԻՆԵՐԱԼՆ ԸՆԴ ՄԵԹԱԼՆ ԷՖ ԶԵԹ» և «ԹԻ ԷՍ ԷՍ ՍԻ Արմենիա» ընկերությունների միջև կնքված բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրով և «ՌԱԿ ՄԻՆԵՐԱԼՆ ԸՆԴ ՄԵԹԱԼՆ ԷՖ ԶԵԹ» ընկերության կողմից Արաքս Դիլանյանի 0170202864 հաշվեհամարին 8 մլն ԱՄՆ դոլար փոխանցելու հանգամանքը հաստատող մյուս փաստաթղթերով,

> քրեական գործով իրավական օգնություն հայցելու միջնորդության շրջանակներում Արաքսյան Միացյալ Էմիրություններից ստացված փաստաթղթերով, որոնց համաձայն՝ «Աբու Դաբիի թիվ 1 բանկը 02.05.2017թ. թիվ 17/CD/583 գրությամբ հայտնել է, որ 0170202864 հաշվեհամարի օգտատեր է հանդիսանում տիկին Արաքս Դիլանյանը: 2008թ. փետրվարի 7-ին նշված հաշվեհամարին ստացվել է 8 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք 29.296.000 ԱՄԷ դիրհամ՝ Ալ Ֆուջեյրիայի ազգային բանկում «RAK MINERALS AND METAL INVT» անունով բացված հաշվեհամարից, և գումարը նույն օրը փոխանցվել է Աբու Դաբիի թիվ 1 բանկում երեք ֆիզիկական անձանց՝ Արմեն

Խաչատրյանի, Վիկտոր Մարտիրոսյանի և Գագիկ Կարապետյանի անուններով բացված ներքին հաշվեհամարներին,

> Արաբական Միացյալ Էմիրություններից քննչական պահանջի շրջանակներում ստացված լրացուցիչ փաստաթղթերով, որոնցով հաստատվել է, որ Արաքս Դիլանյանի թիվ 170202864 դեբեդային հաշվեհամարից ներքին փոխանցումով գումարները ստացած թիվ 6200218528 կրեդիտորային հաշվեհամարը տնօրինած Արմեն Խաչատրյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, 13.08.1965թ. ծնված, սույն քրեական գործով մեղադրյալ Արմեն Խաչիկի Խաչատրյանը, թիվ 6220218311 կրեդիտորային հաշվեհամարը տնօրինած Վիկտոր Մարտիրոսյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, 27.05.1955թ. ծնված, սույն քրեական գործով մեղադրյալ Վիկտոր Արշավիրի Մարտիրոսյանը, իսկ թիվ 6200217396 կրեդիտորային հաշվեհամարը տնօրինած Գագիկ Կարապետյանը հանդիսանում է ՀՀ քաղաքացի, 12.01.1959թ. ծնված, սույն քրեական գործով մեղադրյալ Գագիկ Հրանտի Կարապետյանը, /ովքեր հանդիսանում են Արամ Հարությունյանի մտերիմները/:

Այսպիսով, քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը բավարար հիմք է տալիս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արամ Հարությունյանին սույն գործով ներգրավելու որպես մեղադրյալ և մեղադրանք առաջադրելու առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով եկամուտների օրինականացման համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարելի ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...),

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է խափանման միջոցի կիրառման հիմքերը:

Կալանավորման պայմաններից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, դիրքորոշումներ այն մասին, որ հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որը բավարար կլինի անաչառ դատորդին համոզելու, որ տվյալ անձը հանցանք է կատարել (Ilgar Mammadov v. Azerbaijan, § 88; Erdagoz v. Turkey, § 51; Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, § 32): Հետևաբար, իշխանությունների կողմից միջնորդության հիմնավորվածությունն ապահովելու նպատակով գործի հիմնական հանգամանքների վերաբերյալ ընդհանուր քննություն չկատարելը կհանգեցնի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի խախտման (Stepuleac v. Moldova, § 73; Elpi and Others v. Turkey, § 674): Ինչ վերաբերում է «հիմնավոր» հասկացության բովանդակության բացահայտմանը, ապա դա կախված է գործի բոլոր հանգամանքներից (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, § 32):

Անդրադառնալով կալանավորման հիմքերին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է հանցագործության համար մեղադրվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր, մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս Stogmuller v. Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15), վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը (տե՛ս Wemhoff v. Germany, 1968 թվականի հունիսի 27, § 14), կկատարի նոր հանցանքներ (տե՛ս Matznetter v Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս Letellier v. France, 1991 թվականի հունիսի 26, § 51): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ էության, նախատեսված են նշված հիմքերը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը կալանավորման պայմանների հետ միասին ինքնին հիմք է անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ իր նախադեպային իրավունքում փաստել է.

(...)

«[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (...) [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է:

(...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված (*տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը*):

ՀՀ Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, իր որոշմամբ հաստատել է, որ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմքեր, այնուամենայնիվ, դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս, ինչպես նաև գրավի թույլատրելիության հարցը լուծելիս:

Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին (Վահագն Պողոսյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշումը):

Արամ Ճուղուրյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն

մասին, որ. «(...) կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: (որոշման 4-րդ կետ)»:

Այն, որ անձի զբաղեցրած պաշտոնը և նրան ծառայողական գործունեության հետ կապված հանցագործության կատարում վերագրելը քննությանը խոչընդոտելու ռիսկը գնահատելու վերաբերելի գործոններ են, փաստվում է նաև 2014 թվականի մարտի 11-ին Եվրոպական դատարանի կողմից քննության առնված քաղաքացի Վահան Խանգադյանի թիվ 68571/11 գանգատի ընդունելության հարցի քննարկման արդյունքում կայացված պատճառաբանված որոշումը, որով Եվրոպական դատարանը ներկայացված գանգատը համարել է անընդունելի, իսկ պարոն Վահան Խանգադյանին անազատության մեջ պահելու համար Հայաստանի ներպետական դատական ատյանների պատճառաբանությունները՝ բավարար ՄԻԵԿ 5-րդ հոդվածի տեսակետից:

Սույն գործի փաստական հանգամանքները դիտարկելով մեջբերված իրավական դիրքորոշումների համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ քրեական գործով ձեռք բերված վերը վկայակոչված ապացույցները վկայում են, որ առկա է հիմնավոր կասկած՝ Արամ Խաչիկի Հարությունյանի կողմից հանցանքներ կատարելու վերաբերյալ:

Այդ ապացույցներն անկողմնակալ դիտորդին ողջամտորեն հիմք են տալիս ենթադրելու, որ Արամ Հարությունյանը պահանջել և ստացել է առանձնապես խոշոր չափերով կաշառք, այնուհետև՝ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույք՝ այն է՝ նշված կաշառքի առարկան տարբեր անձանց անուններով բանկային հաշիվներով փոխանցումներ է ապահովել՝ նպատակ ունենալով թաքցնել այդ գումարի հանցավոր ծագումը: Գործով ձեռք բերված փաստական տվյալները, ուղղակիորեն հաստատելով Արամ Հարությունյանի անմիջական մասնակցությունն այդ գործողություններին՝ վկայում են հանցանք կատարելու առավել քան հիմնավոր կասկածի, որպես կալանավորման պայմանի, առկայության մասին:

Անդրադառնալով կալանավորման հիմքերին, անհրաժեշտ է փաստել, որ Արամ Հարությունյանին վերագրվում է պետական ծառայության և տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձնապես ծանր հանցանքների կատարում, որի համար որպես պատիժ նախատեսված է 7-ից մինչև 12 տարի ժամկետով ազատազրկում: Արամ Հարությունյանին մեղսագրվող հանցագործության բնույթը,

կաշառքի ստացման շղթաներում բազմաթիվ անձանց ներգրավվածությունը, վկայում են դրա հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին:

Արամ Հարությունյանի հավանական վարքագծի կանխատեսման առումով առանձնակի դեր ու նշանակություն ունի այն հանգամանքը, որ նա կարող է ձեռնարկել միջոցներ՝ դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ուղղությամբ, հատկապես այն պայմաններում, երբ հանցանքի առերևույթ կատարմանը ներգրավված մի շարք անձինք հանդիսանում են կամ նրա մտերիմները, կամ նրա կողմից ղեկավարված պետական կառույցներում և մասնավոր ընկերություններում աշխատող անձինք:

Վերոնշյալ հանգամանքները էականորեն բարձրացնում են ազատության մեջ գտնվելու դեպքում Արամ Հարությունյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութեր ու փաստաթղթեր թաքցնելու և կեղծելու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու, ինչպես նաև նրան վերագրվող հանցանքի ծանրությամբ պայմանավորված՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և պատժից ու պատասխանատվությունից խուսափելու բարձր հավանականությունը:

Առավել ևս՝ ներկա պահին առերևույթ տվյալներ են ստացվել նաև վարույթն իրականացնող մարմնից Ա.Հարությունյանի թաքնվելու վերաբերյալ, քանի որ վերջինիս հետ մի քանի օր շարունակ քննիչին չի հաջողվել կապ հաստատել՝ համապատասխան քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը հրավիրելու նպատակով:

Նախկինում զբաղեցրած բարձր պետական պաշտոններով, ծավալած հասարակական գործունեության բնույթով և ձևավորված կայուն կապերով, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակով պայմանավորված որոշակի հասարակական դիրքն ու հեղինակությունը, հանցագործության կատարմանն այլ անձանց առերևույթ մասնակցությունը, վերջիններիս նկատմամբ Արամ Հարությունյանի ազդեցությունը ևս հիմք են հանդիսանում ազատության մեջ մնալու դեպքում վերջինս կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու ողջամիտ կանխատեսման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 136-րդ հոդվածի 2-րդ մասով,


Մ Ի Զ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ Կ

Համաձայնություն տալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արամ Իսաչիկի Հարությունյանին ազատությունից զրկելուն՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն:

Առդիր՝ ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Արդարադատության առաջին դասի խորհրդական՝

Ա. Դավթյան

A handwritten signature in dark ink, appearing to read 'A. Davtyan', is written over a horizontal line.

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԱՄԱՎՈՐ ԱՐԱՄ ԽԱԶԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ
ԶՐԿԵԼՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը *որոշում է.*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արամ Խաչիկի
Հարությունյանին ազատությունից զրկելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի միջնորդությանը տալ համաձայնություն:

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ

Ա. Բաբլոյան

... դեկտեմբերի 2018թ.
ք.Երևան

ԱԺՈ-